11 (93). ՋԱԽՋԸՊԱՆԸ

Ճքնավորին մեկը կելլե սարը, անապատը ճքնելու։ Մե իմաստունըմ էս ճքնավորին քովը կէրթա, կըսե՝ «էրթամ փորձեմ, թե հավատին շիտակ է»։

Կըսե.— Ինչքա՞ն ժամանակ է հոս մնալդ։

Ճքնավորը կըսե.— Քսան տարի է։

— Է՛,— իմաստունը կըսե,— հոս, էլի քսան տարի է օր մնաս, մե ջախչպանըմ կա, դու էնոր ճկութը չես։

Ճքնավորը մտածե կը, ինքն իրեն կըսե՝ «ես էկել եմ թե անապատը մնամ, ճքնավոր ըլլիմ, էս ի՞նչ կըսե։ Էդ ջաղասկը էդ ի՞նչ բան է, հազար միլլըթ ջաղասկը կէրթա քուքա, ըռունդը, խելացին, էդ ինչը՞ղ տի ըլլի օր ես Ջաղչըպնին ճկութը չըլլիմ»։

Իմաստունը կըսե.— Ջիտեմ, քնե տեսսի։

Ճքնավորը հարցնե կը.— Էդ Ջաղչըպանն հ՞ո՞ւրտեղ է, ցո՛ւց տուր ինձի։

Իմաստունը կըսե.— Կէրթաս այնի քաղաքը, քաղքին տակը ջուրըմ կը վաղղե, ջաղասկը էդ ջրին վրան է։

Իմաստունը կըսե.— Ահան էս ըսի՝ կէրթամ։

Ճքնավորը կըսե.— Ես պիտի էրթամ Ջախչըպընին տեսնիմ։— Կելլե կէրթա տեսնելու։ Կէրթա ջաղասկը նե օր կմտնի բարև կուտա, Ջաղչպանը բարևը չի առնե, չորս լիղվով բարև կուտա, էլի բարևը չի առնե։ Ջաղչպանն օր բարևը չի առնե, էս Ճքնավորը մտածե կը թե՝ «Իսիկ ինչի բարևս չառավ, խո՞ւլ է էս մարթը, ի՞նչ է»։ Ջախչըպանը գործը պրծնի շիտկի կը օրա, կըսե.— Գիտե՛ս ինչի բարևդ չառա,— արուն թարախը կը ջոկկեի, չէի հ՞ուզե օր մեկին հացը մեկալին խառնվի, էդոր համար է բարևդ չառա։

Մութն օր կըյնի, Ջախչըպանը նշանածին կըսե.— Պատառըմ հաց փի ուտենք։

Հացերը կուտեն պրծնին կը, էսոր նշանածը տեղը կը ցկե։ Նշանածը տեղանն օր կըցկե, Ճքնավորը կըսե.— Էս ինձի մե տեղըմ ցկի՞ք։

Ջախչըպանը կըսե.— Քեզի պես մարթուն խո չերուն մեչը չպիտի պառկեցընեմ. իրեքս է մե տեղըմ տի պառկինք։

Ճքնավորը կըսե.— Ախպար, ամոթ չէ՞, կըլլի՞։

Ջախչըպանը կըսե.— Օր ճքնավոր էս՝ կըլլի՛։

Իրեք հոգին՝ Ջախչըպանը, Ճքնավորը, Ջախչըպնին կնիկը կելլեն մե տեղ պառկին կը։ Պառկելեն առաջ Ջախչըպանը վերեն, առոցը վրա մե ֆոքուստըմ է սարքե՝ ղընդիլով ջուր է կախե. ղընդիլին օտար մարթ օր կդիպչի՝ պառկածներուն ճակտնուն ջուր կը կաթե։

Ճքնավորը Ջախչըպնին նշանածին կուշտը ժաժ օր քուքա՝ միտքը կը փոխե, էդ վախտը ճակտնուն ջուրը կը կաթե։

Ջախչըպանը կըսե.— Ճքնավո՛ր, հավատիդ ճշմարիտ կեցի, կայեմ օր միտքդ փոխեցիր, դու էստեղաց մարթ չես. առավոտը լուսուն քեզի կտեմ, ջրեմ ճամփեմ կը։

Մե մարթում մե մանչ տղան է. էդոր հարն է մե ջաղասկըմ ունի։ Էրթըլով էս մանչը կը մեդնա, խելքն օր կառնե, ջաղասկը կէրթա քուքա, միշտըրեստնուն կը ճամփե։ Մե օրըմ է քուքա տուն, հորը կըսե.— Հարի՛կ, մեր ջաղասկը ուրուշ ջախչըպնի էլ չեմ տա։

Հարը կըսե.— Այ բալա, ինչի՞։

Տոան օր ջաղասկը կէրթա օր կառնելը սորվի, հորը կըսե.— Արի յա ծախենք ջաղասկը, Ջախչըպանը խոշոր կաղա, գողնա կը, բիրըդին մեղի կը քըվըրդեն, յա ես էրթամ ջաղասկը։

Հարը կըսե.— Դու կըրնը՞ս օր էրթաս։

— Ես կէրթամ,— կըսե;— մեր ապրանքը ուրուշին ինչի՞ տանք օր, հախը հաղըր ես կառնեմ։

Հարը կըսե.— Տոր չփորցեմ, քեզի ջաղասկ չեմ ճամփե։ Հարը կըսե.— Հըլը կեցի, տունը ինձի ինչ պրադուխտ է պետք քեզի ըսեմ, թե քնացիր էս պրադուխտը քաղաքեն փերիր, նոր ղրկեմ կը ջաղասկը։

Ջաղչըպնին մանչը հորը ցուցակը կառնե, ձին կը հեգնի, կէրթա քաղաք պրադուխտը փերելու։ Քաղքեն քուքա հասնի կը օրա մեր Գոգոլան, ձիեն կիշնի օր ջրե, ախպրին քովը մե ախչկանըմ կը տեսնի, էսիկ ձին կը հեգնի, կուզե մոտիկ քշե, ձին մոտիկ չի էրթա։

Տղան կըսե.— Քո՛ւրիկ, ջուրըմ տու։

Ախչիկը վերցնե իրեն քուղան կօղվե, ջուր կը լլե, կուտա տղին։ Տղան կառնե ջուրը կը խմե. էդ օրվնեն ախչիկը մանչուն ախպար կըսե, տղան ախչկանը՝ քուր։

Տղան կէրթա տուն օր կը հասնի, պրադուխտն օր կըտեսնի, հարը կըսե.— Չէ՞, տղիս ըրախամը տեղն է, մանչս հասել է, կըրնըմ նիշանե։ Հարը ձին կը հեղնի քուքա ախպրին քով, ձիեցեն կիշնի, ձին ախպրին ջրեն խըմցընելու ժամանակ չորս ախչիկ կը տեսնի, մե ախչիկըմ է, վերն օր տղին ջուր էր տվե, ջոկ կայնել է։ Ախչիկնին հընըք կէնեն, իրար վրա ջուր կը ցողեն, էս մարթը կըսե.— Ծո՛, էս ի՞նչ կէնեն։

Տղին հորը ըշկը կըյնի էդ ջոկ կայնածին վրա, կըսե. «Իտի ախչիկը խելառ է, ինչ է, կայնել է, ի՞նչ կաշե»։ Հարը մսխուզ ձիուն ղոլըննուն ու դիղգինին հետ կը խաղա. էս ախչըկները կէրթան, էդ կշտի կայնածը կը մնա. քիչըմ հ՝ետև էս կայնածը ջուրը կը լլե, կէրթա հորը տունը։ Ախչկանը էրթըլեն հ՝ետև տղին հարը ձին ետըկը կառնե, ծանոթինը կէրթա, ձին նե կը քաշե, նստին յըրընութուն կէնեն։

Էս մարթը ծանոթին կըսե.— Հեչ չես հարցընե, ի՞նչ ղըրդ ունիս։

Ծանոթը կըսե.— Ի՞նչ գըրդ ունիս, պատմե աշեմ, ինձի պարդե կարծիքդ։

— Իմ կարծիքս էն է, օր մանչս հասել է, նիշանել կուզեմ, մե հավատարիմ ախչիկ տղամ չկա, օր մանչուս առնեմ։

— Է, ինչ ըսեմ, հոս մանչուդ լայեղ ախչիկ չկա. արի էրթանք դուռը աշե, տեյյա այնի ախչիկը հավնի՞ս կը, հըմը վայթե չտան։ Արի էրթանք մորը տեսնինք։

Էսոնք կէրթան գործը բուռ կը փերեն, խոսկը կառնեն, նիշանեն կը մանչուն հետ։ Նըյսը։

Միջոց կանսնի, հարը տուն քուքա, կնկանը կըսե.— Մանչուս նիշանեցի։

Պատրաստութուն կը տեսնի օլ. կարքե։ Հարսնոցը թըդըրիկ կը տեսնի։ Էսիկ իրեն մարթը թուփ կէնե, նաղրվորը կառնե կէրթա հարսը տուն փերելու. առովոտ կանուխ պսակ օր կէրթան՝ տերտերը չիդիլըն օր վեր կը ցկե, ախչկանը պատկերը կերևա, մանչը ախչըկանը պատկերը տեսնի կը օրա՝ «Ծո,— կըսե,— իդիկ ինձի ջուր տվող ախչըկանը պատկերը կըլմանի։ Ծո, կըսե, էն օր պսակս էղավ, էլ քակվիլ օրենք չէ, էրթամ հարցընեմ, թե ինձի ջուր տվող ախչիկը դո՞ւ ես»։

Մանչը կէրթա ֆըրդըն կըսե.— Ախչի, դու էն ախչիկը խո չե՞ս օր ախրրեն ինձի ջուր տվիր։

Ախչիկը կըսե.— Հա, պսակին վախտը ես է օր քու պատկերըդ տեսա, ըսի իսիկ էն տղան է։

Մանչը կըսե.— Էրիկ կնիկ էղանք, քուր ու ախպոր պես էրթանք ջաղասկը մնանք,— մանչը կըսե,— էղավ օր յա ես մահացա, յա դու, հալալ ըլլի աշխարհը քեզի։

Էսոնք կելլեն կէրթան, քուր ախպոր պես կը մնան ջաղասկը։

Հիմի դառնանք Ճքնավորին։ Ճքնավորն օր քուքա ջաղասկ, իրիկունը Ջաղչըպանն օր գործը կը պրծնի, կնկանը կըսե.— Տեղըմ ցիկ պառկինք։

Ջախչըպանը կըսե.— Տեղ չունիմ, իրեքս է մե տեղըմ տի պառկինք։

Ջաղչըպանը նշանածին մե կուշտը կը պառկի, Ճքնավորն է մեկալ կուշտը։ Գիշերը Ճքնավորն օր միտքը կը փոխե, ժաժ քուքա, զնդիլին ջուրը կը թափի, Ջաղչըպանը կըսե.— Ճքնավո՛ր, ըհրն հավատրգ փոխեցիր։

Ճքնավորը մտածե, մտածե կըսե թե՝ «Ախպա՛ր, էդիկ ի՞նչ գիտե, թե միտքս փոխեցի»։

Ճքնավորը մեմե օր ժաժ քուքա, Ջաղչըպանը կըսե.— Ճքնավոր, շիտկե, դու էստեղաց մարթը չես, ել նստե պափրոռոզմ շինե, քաշե, ես է քարերուն աշեմ, քեզի ճամփու ցկեմ։ Քու ճքնավորութունդ կափեկ չարժե, դու ճքնավոր չես։